ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-26/2 ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ՀՀ ՊԵԿ-ում ներդրված «Հարկատու 3» համակարգի և դրա ենթահամակարգերի սպասարկման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 26.06.2026թ. N 395/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 02.07.2026թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Պողոսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Հանիսյանը, Ա.Ղազարյանը և քարտուղար Գ.Ղազարյանը: Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ Մ.Ասատրյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

-ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-26/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Պողոսյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-26/2 ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգին մասնակցելու համար 29.06.2026թ. էլեկտրոնային փոստի միջոցով հրավեր էր ուղարկվել՝ «Թիմ Սոլուշնս» ՓԲԸ-ին՝ (ՀՎՀՀ 00228737, էլ. հասցե՝ teamsolutions.cjec@gmail.com, հեռ. 095 55-50-06,):
-ՊԵԿ-ՀՄԱ-ԾՁԲ-26/2 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու համար «Թիմ Սոլուշնս» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է հայտ, որի առաջարկված գինը հետևյալն է.

Հ/Հ	Չ/Հ	Մասնակցի անվանումները	Ծառայության անվանումը	Ներկայացրած գները ՀՀ դրամ			Նախահաշվային ընդհանուր գինը ՀՀ դրամ
				ներկայացրած գինը՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	ԱԱՀ	ներկայացրած գինը՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	
1	1	«Թիմ Սոլուշնս» ՓԲԸ	ՀՀ ՊԵԿ-ում ներդրված «Հարկատու 3» համակարգի և դրա ենթահամակարգերի սպասարկման խորհրդատվական ծառայություններ	39 269 406	20 %	47 123 287	**47 123 287**

Քննարկման արդյունքում հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումը իրականացնել նույն նիստի ընթացքում:
-«Թիմ Սոլուշնս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:
Գնահատող հանձնաժողովը որոշեց՝
-«Թիմ Սոլուշնս» ՓԲԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

2. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի հրավերով սահմանված ոչ գնային պայմանների գնահատման չափանիշների մասին վերաբերյալ

1" «Թիմ Սոլուշնս» ՓԲԸ -ի կողմից հայտով ներկայացված հրավերով նախատեսված ոչ գնային պայմանները սահմանող «Մասնագիտական փորձառություն» չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

2. Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ոչ գնային չափանիշները գնահատվել են հրավերի 2.4 կետի համաձայն:

Գնահատման չափանիշը	Մասնակիցների անվանումները
	«Թիմ Սոլուշնս» ՓԲԸ
Մասնագիտական փորձառություն	Բավարար

3. Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հաշվի առնելով, որ «Թիմ Սոլուշնս» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2026 թվականի գնումների պլանով հաստատված նախահաշվային գինը՝

1. «Թիմ Սոլուշնս» ՓԲԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

2. Քանի որ, գնման ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել և անգործության ժամկետը կիրառելի չէ՝ ուստի ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Թիմ Սոլուշնս» ՓԲԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «Թիմ Սոլուշնս» ՓԲԸ-ից ներկայացնելու պայմանագրի ապահովումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Պողոսյան

Անդամներ՝ Ա.Հանիսյան

Ա.Ղազարյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան